

ՕՆԹԱՐԻՕ ՆԱՀԱՆԳԸ ՄԱՅԻՍԸ ԿԸ ՀՌՉԱԿԷ ՈՐՊԵՍ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԱՄԻՍ»

Posted on June 4, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Պէթրի Տողրամաճեան, Թորոնթո, 31 մայիս 2023

Օնթարիո նահանգի խորհրդարանէն ներս Երկուշաբթի, 29 Մայիս 2023-ին, երեկոյան ժամը 5:00ին, տեղի ունեցաւ Մայիս ամիսը «Հայկական ժառանգութեան Ամիս» փառաաշուք յիշատակումը:

Հանդիսաւոր ձեռնարկին ներկայ էին Օնթարիո նահանգի Վարչապետ Տակ Ֆորտ, Նախարարներ, Երեսփոխաններ, Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան Ազնուազարմ տիկին Անահիտ Յարութիւնեան, Թորոնթոյի հայ համայնքի կրօնական, քաղաքացիական առաջնորդներ, Միսիսակա, Քամպրիճ, եւ Սանթ-Քաթրինզ շրջաններու Հայ գաղութի ներկայացուցիչներ նաեւ բազմաթիւ քաղաքական, հասարակական գործիչներ, կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ ժողովուրդի հոծ բազմութիւն:

Սրահին մէկ բաժինը յարդարուած էր Հայաստանը խորհրդանշող սոււներով, խաչքարերով եւ պատկերներով, իսկ միւս մասը՝ գեղեցիկ կարկանդակով, հայկական գինիով, քննեակով եւ համադամ ճաշերով:



Ձախէն աջ երրորդը՝ Օնթարիո նահանգի Վարչապետ Տակ Ֆորտ, կողքին՝

Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Անահիտ Յարութիւնեան, այնուհետեւ՝ Երեսփոխան Արիս Պապիկեան շրջապատուած նախարարներով

Բացման խօսք արտասանեց Օրդ. Մեղրի Հաճիւնեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն և յայտնեց, թէ 105-րդ օրինագիծը, իւրաքանչիւր տարուան Մայիս ամիսը պիտի ճանչնայ, որպէս «Հայկական ժառանգութեան Ամիս», ներկայացուեցաւ Օնթարիո նահանգի խորհրդարանի Աքարպորո-Էյճինքորթ շրջանի Երեսփոխան Արիս Պապիկեանի կողմէ: Օնթարիոյի Օրէնսդիր Ժողովը Գանատայի առաջին օրէնսդիր մարմինն է, որ ընդունեց նման օրէնք՝ յարգելու եւ յարգանքի տուրք մատուցանելու Օնթարիոյի մէջ բնակող հայերուն՝ իրենց գործուն ներդրումին եւ բարի աւանդին համար Գանատական հասարակութեան մէջ:

Օրուայ հանդիսավարը հրաւիրեց Երեսփոխան Արիս Պապիկեանը, որ իր կարգին շնորհակալութիւն յայտնեց Վարչապետ Ֆօրտին եւ նախարարներուն, իրենց միաձայն աջակցութեան ու օժանդակութեան համար:

Ապա խօսք առաւ Վարչապետ Տակ Ֆօրտ, բարձր գնահատելով Երեսփոխան Արիս Պապիկեանի աշխատանքը խորհրդարանէն ներս և Հայ ժողովուրդին համար: Իր կարգին Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Անահիտ Յարութիւնեան շնորհաւորեց ներկաները, շնորհակալութիւն յայտնեց Վարչապետին եւ Օնթարիո նահանգին որ որդեգրեց սոյն նախաձեռնութիւնը: Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Անահիտ Յարութիւնեան նշեց Հայերը այս նահանգի անբաժանելի մասնիկն են եւ հակառակ անոր որ Մայրենի հողէն հազարաւոր մղոններ հեռու են, կարողացած են պահպանել իրենց մշակոյթը եւ աւանդները:



խօսքի

աւարտին Երեսփոխան Արիս Պապիկեան հրաւիրեց Վարչապետ Տակ Ֆօրտ, Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Անահիտ Յարութիւնեան և պատուոյ հիւրերը հատելու 105 ամեակի առթիւ պատրաստուած կարկանդակը:

Գեղարուեստական յայտագիրով հանդէս եկաւ՝ «Սասուն Պարախումբը» հրամցնելով Հայկական գեղեցիկ պարեր:

Այստեղ կարելի է յիշել սոյն ձեռնարկին ներկայ էին նաեւ այլազան բազմամշակութային փոքրամասնութիւններու ներկայացուցիչներ՝ Յոյն, Չինացի, Ասորի, Հրեայ, Ղաչի, Թամիլ, Բլտան և Սրիան :



Այս առթիւ երեսփոխան Պապիկեան պատրաստած էր գրքոյկ մը, որ կը բովանդակէ Հայ ժողովուրդի գաղթը դէպի Գանատա եւ հաստատուիլը Օնթարիո սահանգին մէջ: Ինչպէս նաև Հայերուն նշանակալի ներդրումը սահանգի ընկերային, մշակութային, կրթական, տնտեսական և քաղաքական հաստատութիւններուն մէջ, արուեստի, գիտութիւններու, գրականութեան մարզերէն ներս: Աւելին՝ Օնթարիոյի Հայ համայնգին մասնակցութիւնը Առաջին եւ երկրորդ Համաշխարհային պատերազմներուն Գանատայի բանակի կողքին:

Նոյնպէս գրքոյկը կը ներբակէ Գանատայի մարդկային օժանդակութիւնը ցեղասպանութենէ վերապրող հայ ժողովուրդին իրենց ամենամուրթ ժամերուն եւ Ճորճթաուն Պոյճ մարդասիրական առաքելութեանը: Նոյնպէս տեղ գտած է գրքոյկին մէջ Դաշնային եւ սահանգային Օրէնսդիր եւ գործադիր մարմիններու կողմէ հայերուն ցեղասպանութեան ճանաչումը:



Երեսփոխան Արիս Պապիկեանի պատրաստած գրքոյկը

Ձեռնարկի աւարտին Երեսփոխան Արիս Պապիկեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք նպաստեցին սոյն ձեռնարկի կազմակերպական աշխատանքին եւ յաջողութեան:

There are no comments yet.